ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 09 >> 09 2013 թվական N 109 քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1] -րդ և 77[2] -րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանը.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մայիսյանի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Լիպարիտ Մարտիրոսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ, խմբի ղեկավար,

Մարիամ Գյոդակյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ,

Սուրեն Ավետիսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ,

Հուրիկ Մարտիրոսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ,

Գագիկ Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ,

Լյովա Հակոբյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ,

Արմեն Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ:

2. Աշխատանքային խմբին՝

1) Մայիսյանի համայնքում վարչական հսկողություն իրականացնել 10 աշխատանքային օրվա ընթացքում, (ժամկետ՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ից մինչև 2013 թվականի սեպտեմբերի 27-ը),

2) վարչական հսկողությունն իրականացնել 2010 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամակակաշրջանի համար,

3) 5 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել արդյունքները և սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է